ՏՈՆԱՑՈՒՅՑ

1. Փետրվարի 12 Վարդանանց տոն:
2. Փետրվարի 15՝ Բուն Բարեկենդան, Սուրբ Պատարագ, որի ընթացքում կնժենք վարդանանց տոնը: Սուրբ Պատարագին ներկա կլինի Վատիկանի հարգարժան դեսպան Արքեպիսկոպոս Իվան Յուրկովիչը: Պատարագի ավարտին տեղի կունենա Մոխրոց՝ Հիշիր, ով մարդ, հող էիր, հող կդառնաս: Սկիզբը՝ ժամը 15:30:
3. Փետրվարի 16-ից Ապրիլի 4՝ Մեծ Պահքի ժամանակաշրջան:
4. Մարտի 25՝ Սուրբ Կույս Մարիամի Ավետման տոն:
5. Մարտի 29՝ Ծաղկազարդ, Ուռօրհնեք և Դռնբացեք:
6. Ապրիլի 5՝ Սուրբ ԶԱՏԻԿ, Պատարգ՝ ժամը 15:30:
7. Ապրիլի 6՝ Օր մեռելոց: Պատարագ ժամը 13:00

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի
Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
http:/armcatholik.ru



ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Տիտոսի 1, 1-11

1 Պողոսը՝ ծառայ Աստծու եւ առաքեալ Յիսուս Քրիստոսի, որ
կոչուած է բերելու Աստծու ընտրեալներին հաւատի եւ
ճշմարտութեան գիտութեանը, որ աստուածապաշտութեամբ է [2]եւ
յաւիտենական կեանքի յոյսով, որը խոստացաւ անսուտն Աստուած
յաւիտենական ժամանակներից առաջ, [3]բայց յայտնեց իր խօսքը իր
ժամանակին՝ քարոզութեամբ, որին ես հաւատարիմ եղայ ըստ մեր
Փրկիչ Աստծու հրամանի. [4]Տիտոսին՝ հասարակաց հաւատի մէջ իմ
սիրելի որդուն, շնո՛րհ եւ խաղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Փրկիչ
Քրիստոս Յիսուսից։ [5]Դրա համար իսկ քեզ թողեցի Կրետէում,
որպէսզի, ինչ պակաս բան որ կայ, ուղղես եւ իւրաքանչիւր
քաղաքում երէցներ կարգես, ինչպէս որ ես պատուիրեցի
քեզ։ [6]Կարգես մի այնպիսի մարդու, որ լինի անբասիր, մէ՛կ կնոջ
մարդ, ունենայ հաւատացեալ որդիներ, որոնք անառակութեան մէջ
ամբաստանուած կամ անհնազանդ չլինեն, [7]քանի որ պէտք է, որ
եպիսկոպոսն անբասիր լինի, որպէս Աստծու տնտես. ոչ յանդուգն, ոչ
բարկացող, ոչ անարգող, ոչ կռուարար, ոչ շահասէր, [8]այլ՝ հիւրասէր,
բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, [9]ամուր կապուած
վարդապետութեան հաւատի խօսքին, որպէսզի կարողանայ
յորդորել ողջամիտ վարդապետութեամբ եւ կշտամբել
հակառակորդներին. [10]քանզի անհնազանդներ շատ կան,
դատարկախօսներ, մոլորեցնողներ, մանաւանդ եթէ հրէութիւնից
դարձածներից են. [11]նրանց բերանը պէտք է փակել. նրանք
կործանում են բոլոր ընտանիքները եւ շահամոլութեան համար
ուսուցանում են այնպիսի բաներ, որ պէտք չէ ուսուցանել։

[59]Այս է հացը, որ երկնքից է իջած. ոչ այնպէս, ինչպէս մանանան,
որը ձեր հայրերը կերան եւ մեռան. ով այս հացն ուտում է, կ՝ապրի
յաւիտեան»: [60]Նա այս բաներն ասաց Կափառնայումի մէջ
ժողովարանում ուսուցանելիս: [61]Եւ աշակերտներից շատերը, երբ
լսեցին, ասացին. «Խիստ է այդ խօսքը. ո՞վ կարող է այն
լսել»:[62]Յիսուս երբ ինքն իրենից իմացաւ, որ իր աշակերտները դրա
համար տրտնջում են, նրանց ասաց. «Այդ ձեզ գայթակղեցնո՞ւմ
է.[63]իսկ արդ, եթէ տեսնէք մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, ուր
առաջ էր...»: [64]«Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող
անել: Այն խօսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է եւ կեանք: [65]Բայց ձեր մէջ
կան ոմանք, որ չեն հաւատում»: Քանի որ Յիսուս սկզբից գիտէր, թէ
ովքեր են նրանք, որ չեն հաւատում, եւ ով է նա, որ մատնելու է իրեն,
ասաց. [66]«Դրա համար ձեզ ասացի, թէ ոչ ոք չի կարող գալ ինձ մօտ,
եթէ այդ իմ Հօրից տրուած չէ նրան»: [67]Դրա վրայ՝ նրա
աշակերտներից շատերը յետ քաշուեցին եւ այլեւս նրա հետ չէին
շրջում: [68]Յիսուս տասներկու աշակերտներին ասաց. «Միթէ դո՞ւք էլ
ուզում էք գնալ»: [69]Սիմոն Պետրոսը նրան պատասխանեց. «Տէ՛ր, ո՞ւմ
մօտ պիտի գնանք: Դու յաւիտենական կեանքի խօսքեր ունես:[70]Եւ
մենք հաւատացինք եւ ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ Աստծու
Որդին»: [71]Յիսուս նրանց պատասխանեց. «Չէ՞ որ ես եմ ընտրել ձեզ՝
Տասներկուսիդ. եւ ձեզանից մէկը սատանայ է»: [72]Նա խօսում էր
Իսկարիովտացու՝ Սիմոնի որդի Յուդայի մասին, որովհետեւ հէնց նա
էր մատնելու նրան. եւ Տասներկուսից մէկն էր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 26-ին Մոսկվայի Անարատ Հղության մայր տաճարի տարածքում տեղի կունենա միջոցառում, որի ընթացքում Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու կողմից ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ԽԱՉՔԱՐ ԿՏԵՂԱԴՐՎԻ 1915Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ:

Խաչքարի բացման արարողությանը հրավիրված են բարձրաստիճան անձինք Կաթողիկե պատրիարքարանից, Հայ Առաքելական եկեղեցուց, Վատիկանից, Ռուսաստանում Վատիկանի նունցիատուրայից (Դեսպանատնից), Ռուս Ուղղափառ եկեղեցուց, Հայաստանի Հանրապետությունից, Ռուսաստանում Հայաստանի դեսպանատնից:

Հրավիրում ենք ներկա գտնվել և հարգանքի տուրք մատուցել:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՆՏԱՐԲԵՐ ՉԵՆ ՀԱՅՈՑ ՄԵԾ ՑԱՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ և ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԵՆՑ ԼՈՒՄԱՆ ՆԵՐԴՆԵԼ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ:

Օգնել ցանկացողները՝ դիմեն վարդապետին:

Ժողովրդապետություն

Սրբերի հիշատակություն 12փետրվարի 2015թ.

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ և 1036 ՎԿԱՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

451 թվականի մայիսին, Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, հայ եկեղեցու եւ քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայ Եկեղեցու մեծագույն սրբերից են: Իրենց նահատակությամբ նրանք հաստատեցին հայ ժողովրդի ապրելու կամքը եւ լինելիության իրավունքը: Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց ի վեր Հայ եկեղեցին սերտորեն կապված է եղել հայրենիքի պաշտպանության գործին: Դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է: Պարսից զորքերի դեմ մղված պատերազմում հայ մարտիկների կողքին էր Հայոց եկեղեցին: Հովսեփ կաթողիկոսի եւ Ղևոնդ Երեցի առաջնորդությամբ:

Մարտից առաջ հայ հոգևորականները ոչ միայն քաջալերում էին զորքին մակաբայեցիների օրինակով, այլև մկրտության և Սբ. Պատարագի խորհրդով առավել ամրապնդում էին նվիրյալների հավատն ու ոգին: «Եվ սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաև ավազան, և եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. Եվ առավոտյան Սբ. հաղորդություն ընդունեցին», - գրում է Եղիշե պատմիչը Վարդանանց պատերազմից առաջ կատարվածի մասին: Վարդանանց տոնին հայկական բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԸ

«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն...» (Մատթ. 5,11):

Անհնար է, որ գայթակղություն չգա, անհնար է, որ բարու և չարի պայքար չլինի, անհնար է, որ սատանան ձեզ չփորձի, բայց դուք հաստատուն եղեք:

Աշակերտները տրտնջում էին ասելով: *«Դժվար է ընդունել քո այս խոսքը, ո՞վ կարող է այն լսել» (Հովհ. 6,60):*

Կյանքը պայքար է, մի' հուսահատվեք և մի' ընկճվեք: *«Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի» (Մատթ. 10,22):*

Երջանկությունն Աստծուն ամեն ինչից առավել սիրելն է: Որովհետև Աստված առաջինը Ինքն է, որ մարդուն ավելի սիրեց Իր բոլոր արարածներից: Անհնար է, որ մարդու բաղձանքը հանգստանա այլ բաներով, եթե ոչ միայն Աստծով:

Հիսուսը հարցրեց տասներկու աշակերտներին: *«Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ» (Հովհ. 6,67):*

Սիմոն Պետրոսը պատասխանեց: *«Տե՛ր, ո՞ւմ մոտ գնանք. Հավիտենական կյանքի տվող խոսքերը դո՛ւ ունես: Մենք հավատացինք և իմացանք, որ դո՛ւ ես Քրիստոսը, Աստծու Սուրբը» (Հովհ. 6,68):*

Առանց Աստծու շնորհի ոչ ոք չի կարող գնալ դեպի գերբնական երջանկությունը, ուստի Աստծուն ժառանգելու համար հարկավոր է շնորհ, որ բխում է Քրիստոսի չարչարանքների արդյունքից:

Երբ փորձության մեջ ենք ընկնում, մտաբերում ենք Հիսուսին: Գիտենք, որ Նրա ճանապարհը շատ փշոտ էր և նեղություններով ու նախատինքներով լիքն էր: Երկրի վրա մարդու կյանքը պատերազմ է և հաղթողներն են մըրցանակին տիրանում:*«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով, հասնեք նրա խոստմանը, քանի որ մի փոքր, շատ փոքր ժամանակ ևս, և գալու է նա, ով պիտի գա և չպիտի ուշանա» (Եբր. 10:36-37):*

Արթուն և պատրաստ են այն մարդիկ, որոնք Աստծու նկատմամբ սիրով ու հավատով լի են և մանավանդ իրենց բարի ու արդար գործերով, պարզ ու մաքուր աչքերով են նայում աշխարհին: *«Բարի մարդն իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ» (Մատթ. 12,34-35):*

Առաքյալները Հիսուսի Համբարձումից և Վերնատան մեջ Սուրբ Հոգու շնորհները ստանալուց հետո, իրենց քարոզչությունների ընթացքում ենթարկվեցին ամեն տեսակ զրկանքների և չարչարանքների, բայց ոչ մի րոպե չթուլացան ու չհեռացան իրենց հավատից: Նրանք ցույց տվեցին, որ իրենց հավատը հաստատված է անխորտակելի մի ժայռի վրա, որին դիպչելով փշրվեցին աշխարհի բոլոր տեսակի փոթորիկները:

«Օրինա՛կ եղիր հավատացյալներին խոսքով, վարմունքով, սիրով, հավատով» (Ա Տիմ. 4,12):

Ծայրագույն Վարդապետ Հայր Պետրոս Պետրոսյան
Մոսկվա 8 փետրվարի 2015թ.